ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

Թեմա՝ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Առարկա՝ ՆԶՊ

Ուսուցչուհի՝ Մարսելա Հերաբյան

Ղեկավար՝ Արմեն Հայրապետյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..…….3

ԳԼՈՒԽ 1

ՆԱԽԱՁՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

ԱՆՀԱՆԳՍՏԱՑՆՈՂ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ……5

ԳԼՈՒԽ 2

ՆԱԽԱՁՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ……...11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեման՝ Զինվորական ծառայության հարմարվողականության խնդիրները նախազորակոչային երիտասարդների շրջանում:

Թեմայի արդիականությունը՝ Յուրաքանչյուր զինծառայող ունի իրեն բնորոշ անհատական, հոգեբանական առանձնահատկությունները, ուստի առաջին պլան է մղվում նախազորակոչային տարիքի անձանց շրջանում այն հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական բնութագրիչների համախմբի պարզորոշումը, և ըստ այդմ, ռազմահայրենասիրական դաստիարակության շրջանակներում հոգեբանական ու մանկավարժական ներգործությունների իրագործմամբ ապագա զինծառայողի սոցիալ-հոգեբանական կառուցվածքի ձևավորումը, որը զորակոչիկին հնարավորություն կտա առանց ցնցումների և կարճ ժամանակամիջոցներում հարմարվելու բանակային առօրեական կենսակերպին, յուրացնելու անհրաժեշտ ռազմամասնագիտական գիտելիքներն ու արագ կերպով ինտեգրվելու ծառայողական–մարտական խնդիրների կատարմանը:

Ըստ էության, մի սոցիումից մեկ այլ սոցիումի անցնելը առավել ևս քաղաքացիական կյանքից զորանոցային ծառայողական պայմաններում հայտնվելը հզոր հոգեհուզական գործոն է, որը ներգործելով զորակոչիկի հոգեկանի վրա, պարտադրում է նրան հարմարվել նոր կենսագործունեության պայմաններին, ինչպես նաև այդ պայմանները որոշակիորեն հարմարեցնել իր պահանջներին:

Հետազոտության նպատակը՝ թեստավորման, զրույցի միջոցով պարզել դպրոցականների շրջանում բանակի ու ծառայության մասին սովորողների պատկերացումները, զինծառայությունից ունեցած ակնկալիքները:

Համեմատական սոցիարցում իրականացնել բանակից առաջ և բանակից հետո: Պարզել զինծառայողների հարմարվողականության աստիճանը պայմանավորված նախքան զինվորական ծառայության զորակոչվելը նրա հոգեբանական պատրաստվածությամբ:

Հետազոտության օբյեկտ են հանդիսացել նախազորոկոչային տարիքի անձինք, նրանց շրջանում կատարված հետազոտությունները:

Հետազոտության առարկան նախազորակոչային տարիքի երիտասարդների հարմարվողականության խնդիրներն են բանակային կյանքին:

Հետազոտության խնդիրներ են՝

1. ՈՒսումնասիրել այն հանգամանքները, որոնք խանգարում են զորակոչիկներին հեշտ հարմարվել բանակային կյանքին :
2. Բացահայտել նախազորակոչային տարիքի անձանց զինվորական ծառայության ճիշտ պատրաստվելու հոգեբանական ուղիները :

Հետազոտությունը կազմակերպվել է հետևյալ փուլերով ՝

Առաջին փուլ՝ գրական աղբյուրների ուսումնասիրություն և վերլուծություն:

Երկրորդ փուլ՝ նախազորակոչային տարիքի պատանիների շրջանում պարզել այն խնդիրները, որոնք երիտասարդին անհանգստացնում են նախքան բանակ զորակոչ-վելը:

Երրորդ փուլ՝ ստացված հետազոտությունների հիման վրա համեմատել երիտա-սարդների դիրքորոշումը, ըստ այդմ էլ կատարել եզրահանգումներ և առաջարկու-թյուններ:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը՝ աշխատանքը բաղկացած է տիտ-ղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից, եզրակացու-թյունից, գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ ԶՈՒ-ի գերակա խնդիրներից մեկը մարտունակ բանակի ստեղծումն է: Պատերազմի պատմական փորձի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ զինծառայողի անձնավորության հոգեբանական կայունությունը կարևորագույն և արդիական հիմնախնդիրներից է՝ ծառայողական –մարտական խնդիրների կատարման և մարտական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման տեսանկյունից:

Համընդհանուր ընդունելի փաստ է այն հանգամանքը, որ զինվորական ծառայությունը նույնիսկ խաղաղ պայմաններում նախազորակոչիկի համար բավականին բարդ գործընթաց է, որը վերջինից պահանջում է ուժերի մեծ լարվածություն, համապատասխան անձնային հատկությունների առկայություն, առանց որոնց վերջինիս հարմարումը դժվար, երբեմն էլ անհնար է այդ միջավայրում:

Նախազորակոչային տարիքի երիտասարդների համար բանակային կյանքին հարմարվելու խնդիրներն են՝

1. Կենսագործունեության առանձնահատուկ պայմանները՝ հստակ սահմանված օրակարգը, կարգապահության խստիվ պահպանումը, միանձնյա ղեկավարման սկզբունքը, մարտական հերթափոխությունը և այլն:
2. Տեղեկատվության և ժամանակի սղությունը
3. Միջանձնային հարաբերությունների առանձնահատուկ կառուցվածքը
4. Միապաղաղությունը
5. Ֆիզիկական և հոգեբանական առողջությանը սպառնացող վտանգը:

Նախազորակոչային տարիքի պատանիները հստակ պատկերացում չունեն ծառայության մասին, շատ հաճախ դրանք խեղաթյուրված են իրականությունից հեռու: Այս ամենը վախ և անհանգստություն է առաջացնում նորակոչիկի մոտ , որն էլ մուտք գործելով բանակ ամեն ինչում տեսնում է վտանգ, իսկ հրամանատարների հրաման-

ները ընկալում է որպես ՝կոտրելու՝հերթական փորձ: Այս ամենը անդրադառնում է նորակոչիկի վրա և նա դառնում է ագրեսիվ:

Թվարված խնդիրները լուծելու համար հետազոտության նպատակն է ուսումնասիրել նախազորակոչայինների հարմարման անհատական հոգեբանական առանձնահատկությունները:

«Ադապտացիա» եզրույթը (լատիներենից adaptacia՝ հարմարվողականություն) հասկացությունը մի քանի նշանակություն ունի, մասնավորապես՝ շրջակա միջավայրի հետ օրգանիզմի հավասարակշության հարաբերակցության, հարմարման գործընթաց և նպատակ:

Կիրառման տեսանկյունից հարմարման փուլերի և տեսակների առանձնացումը թույլ է տալիս հաշվի առնել զինծառայողների մեծ խմբերի և առանձին անհատների հարմարվողական գործընթացների դինամիկան: Կախված այն բանից թե ինչպիսի պայմաններում է տեղի ունենում մարդու հարմարումը միջավայրին,առանձնացնում են հարմարման հետևյալ տեսակները՝

1. Ֆիզիոլոգիական, կենսաբանական
2. Հոգեբանական՝ մարդու հարմարումը տարբեր պայմաններին և խնդիրներին հոգեկան գործընթացների, վիճակների և հատկանիշների մակարդակում
3. Սոցիալ-հոգեբանական՝հարմարում նոր կոլեկտիվի փոխհարաբեռություններին:

Ամփոփեով հարմարման վերաբերյալ առկա տեսական մոտեցումները ՝կարուղ ենք նշել, որ հարմարումը ոչ միայն գործընտաց է, այլ նաև աւդյունք: Շնորհիվ նման մեխանիզմների տեղի են ունենում հարմարվողական մեծ փոփոխություններ, որոնք էլ փոխում են անձի սոցիալական գործունեությունը: Երիտասարդ նախազորակոչայինների սոցիալ-հոգեբանական հարմարման էությունը վերջիններիս մոտ ի հայտ եկած հակասությունների լուծումն է, որը կապված է նախկինում ձևավորված արժեքային կողմնորոշումների և դիրքորոշումների, հմտությունների և սովորությունների, վարքի և շփման ձևերի փոփոխման, ժամանակակից զինծառայողին ներկայացվող պահանջներին, դրանց հարմարեցման հետ: Տվյալ հակասությունը լուծվում է նախկին վարքի և դիրքորոշումների փոփոխության և նոր հմտությունների, սովորությունների դիրքորոշումների ձևավորման գործընթացում՝ հաշվի առնելով նոր առաջատար գործունեությունը:

Միջավայրի ազդեցությունը նախազորակոչային տարիքի պատանիների դաստիարակության գործում Ռազմահայրենասիրական դաստիարակության առաջին առաջին քայլերն անհրաժեշտ է սկսել դեռևս նախադպրոցական տարիներին, իսկ առավել գիտակցված և կայուն գիտելիքներ պետք է տան դպրոցը և բուհը:

Շատ կարևոր է դպրոցներում նպաստել աշակերտների գաղափարական պատրաստությանը: Հայրենասիրություն սերմանելը ամենաբարդ խնդիրներից է, որի արդյունքը միանգամից չի երևում: Դա ամենօրյա հեռևողական աշխատանք է: Ապագա հայ զինվորը պետք է գիտակցի, որ իր պարտքն է հայրենիքը պաշտպանել թշնամիներից ու կռվել պատմական անարդարության դեմ:

Մասնավորապես զինղեկը պետք է գիտակցի գորխի կարևորությունը, լինի իրական հայրենասիրության ջատագովը, կարողանա հմուտ ու արդյունավետ կազմակերպել ռազմահայրենասիրական աշխատանքները: Զինղեկի արտադպրոցական և արտադասարանային միջոցառումները նորակոչիկներին հայրենիքի պաշտպանությանը պատրաստելու անհրաժեշտ և անքակտելի մասն է:

Հայրենասիրական աշխատանքը ներառում է հիմնականում ռազմահայրենասիրական թեմաներով միջոցառումներ, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մերօրյա հերոսների, կամավորական ջոկատների հետ և այլն:

Դպրոցներում կարևոր է համարվում հոգեբանի աշխատանքը: Անհրաժեշտ է բարձրացնել աշակերտների ոչ միայն մարտունակ ու քաջ ոգին, այլև նպաստել հոգեբանական պատրաստվածությանը, որը պակաս կարևոր չէ: Հոգեբանների խնդիրներից է ավարտական դասարաններում հոգեբանորեն նախապատրաստել տղաներին զինվորական ծառայությանը, որպեսզի նրանք պատրաստ լինեն զինվորական երդմանը, անձնուրաց կերպով և արիաբար ծառայելուն, պաշտպանելու իրենց հայրենիքը, կատարելու զինվորական պարտքը՝ անտրտունջ տանելով զինվորական ծառայության դժվարությունները:

Այսպիսով, աշակերտները ռազմահայրենասիրության ամրապնդման գործում մեծ դեր ունի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացը, ինչի առնչությամբ անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ իրականացնել: Հայրենասիրության դասերը աշակերտի անձի ինքնահաստատման, կայացման, բարոյական արժեքների ձևավորման, ռազմական գաղափարադաստիարակչական մտածելակերպի բարձրացման և հետագայում զինված ուժերում ծառայելու նախապայման են հանդիսանում:

Ռազմական հոգեբանության, որպես ժամանակակից հոգեբանության ոլորտներից մեկի, արդիական հիմնախնդիրներից է ծառայության պաայմաններին զինվորի հոգեբանական հարմարման նախադրյալների առանձնահատկություններն ու դրանց բացահայտումը: Հարմարումը բանակային կյանքին բազմակողմանի գործընթաց է, այն դրսևորվում է ոչ միայն նոր կենսական պայմաններին ողջ օրգանիզմի հարմարվողականությամբ ,այլև անձի կողմից պետք է մշակվեն վարքի որոշակի եղանակներ, որոնք հնարավորություն կտան անձին հաղթահարելու զինծառայության հետ կապված դժվարությունները: Հոգեբանական գրականության մեջ տարբերակվում են հարմարման մի քանի տեսակներ:

Կենսաբանական, երբ անձի մոտ տեղի է ունենում հարմարումը կոնկրետ միջավայրի պայմաններին՝ շոգին, ցրտին, մթությանը և այլն:

Հոգեբանական, երբ անձի մոտ տեղի են ունենում հոգեկան գործընթացների , վիճակների և հատկությունների վերակառուցումներ:

Սոցիալ-հոգեբանական, երբ անձը ստանում է նոր կարգավիճակ և սոցիալական դեր, մտնում է նոր միջանձնային հարաբերությունների մեջ: ՈՒսումնասիրությունները ցույց են տվել, որ անձի հոգեբանական հարմարումը զինվորական ծառայության պայմաններին ընթանում է երեք մակարդակներով , որից կարող է կախված լինել նաև գործունեության արդյունավետությունը:

Առաջինն այն մակարդակն է հարմարման, որտեղ անձն իր վարքն ու գործունեությունը, հմտություններն ու կարողությունները առավելապես համապատասխանեցնում է միջավայրի պահանջներին և իրեն վերագրված դերի ռեալիզացմանը:

Երկրորդն՝ մակերեսայինն է, վարքային դրսևորումներով միայն, երբ անձը ձևավորում է կոնֆորմ վարք, չենթարկվելով անձնային կառուցվածքային փոփոխությունների, ներքուստ պահպանելով ինքնուրույնություն:

Զինվորական կոլեկտիվի բարոյական նկարագրի մեջ իր ուրույն դերն ունի կրոնը: Չափավոր կրոնական զգացմունքներն ու ապրումները նպաստում են զինծառայողի բարոյական զարգացմանը, որ շատ կարևոր է, զերծ են պահում նրան ամեն տեսակ վտանգավոր աղանդավորական հոսանքների ազդեցությունից:

Զինծառայողներին բնորոշ է նաև հարմարման այն ձևը, որը կոչվում է ապահարմարում, երբ անձը ոչ վարքով, ոչ էլ ներքուստ չի հարմարվում նոր միջավայրում: Այսինքն նրա մոտ բավարար չափով չի ձևավորվել ընդունակությունների և անհա-

տականության մի շարք ոլորտներ: Դրանցից են համագործակցելու և շփվելու ընդունակությունները, ուրիշներին ճիշտ ըմբռնելու, ինքնահսկվելու և ինքնաճանաչվելու, ինչպես նաև տվյալ միջավայրին համապատասխան վարքի կարգավորման ունակությունները, կրոնի դերը և այլն:

Խաղաղ ժամանակ հարմարումը զինծառայության պայմանների ենթադրում է զինվորի հարմարումը զինվորական կամ բանակային կանոնադրությանը , օրենքներին, նորմերի , սահմանված կարգին, օրվա ռեժիմին և այլն: Առողջ մթնոլորտի ստեղծման և պահպանման գործում մեծ նշանակություն ունի հրամանատարական անձնակազմի գործունեությունը: Հրամանատարը պետք է ունենա ունակություններ կազմակերպելու և կառավարելու համախմբող հարաբերությունները խմբի ներսում: Կարևոր է նաև հաշվի առնել զինվորի խառնվածքի և բնավորության գծերը և դրսևորել համապատասխան անհատական աշխատանք:

Բանակային ծառայության պայմաններին հեշտ են հարմարվում այն մարդիկ, ովքեր ունեցել են կենցաղի , ապրելաոճի որոշակի ռեժիմ, նաև վարժանքների համակարգը: Վարժանքների համակարգ ասելով հասկանում ենք ոչ միայն ֆիզիկական կոփում անձի, այլ նաև այնպիսի գիտելիքների համակարգի ձևավոևումը , ինչը մեծացնում է տեղեկացվածությունը, կողմնորոշումը և վարքի կառավարումը տարբեր մարտական իրավիճակներում:

Հաջորդ մոտեցումը զինվորի հարմարումն է մարտական իրադրությանը: Այն իրենից ներկայացնում է օրգանիզմի հարմարումը առանձնահատուկ պայմաններին, ինչը թույլ է տալիս զինվորին հաղթահարելու ստեղծված ռազմական իրավիճակը: Այս ամենի հիմքում ընկած է մարտական փորձի յուրացումն ու դրա կատարելագործումը ծառայության ընթացքում: Համաձայն մի շարք ուսումնասիրությունների մարտի ժամանակ զինվորը հաղթահարում է այն բացասական ներգործությունը, որը կապված է վտանգի զգացողության հետ, բացի այդ, ժամանակի ընթացքում սկսում է առավել ճիշտ գնահատել իրադրությունը և զենքը օգտագործել խելամիտ:

Բանակում մարտական գործողությունների կազմակերպման, ուսուցման և յուրացման կարևորությունը նաև այն է, որ ապահովվի անձնակազմի ինչպես ռազմական այնպես էլ բարոյահոգեբանական պատրաստվածությունը պատերազմական և այլ արտակարգ պայմաններում:

Այսպիսով՝ զինվորին բանակին հարմարվելու նախադրյալներն իրենցից ներկայացնում են երկու հիմնական խումբ գործոններ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ, դրանց հաջող համադրությունից կախված է զինվորի հարմարման արդյունավետությունն ու ընդլայնվածությունը:

ԳԼՈՒԽ 2

ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱ-ՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նախազորակոչային տարիքի անձանց սոցիալ հոգեբանական պատրաստության հիմնահարցի քննարկումը հույժ կարևորություն ունի, որի նպատակն է ապահովել զինծառայողի անզնային կայունության պատրաստության ձևավորման պայմանները: Պատրաստության իրականացման ուղիներից է ռազմահայրենասիրական դաստիարակությունը, որն իրագործվում է ի դեմս ընտանիքի, դպրոցի և հասարակության:

Սակավ մարդկային ռեսուրսներ ունեցող մեր հանրապետության ԶՈՒ-ում արդիական է տեսնել զինվորի, որն իո ֆիզիկական ,բարոյական և անձնային հատկություններով արժանի է վստահել սպառազինություն: Այնուհանդերձ հաշվի առնելով ներկայիս բարդ համակարգերով հագեցած տեխնիկայի առկայությունը՝ մարդկային գործոնը մնում է ամենակարևորը, այդ է պատճառը, որ կարևոր է զինվորական ծառայության ընթացում շեշտը դնել զորակոչիկի անձնային հատկությունների ձևավորման վրա , նրա դիրքորոշումների , արժեքային համակարգի, հայացքների և այլնի վրա: Մարդու բարոյական , հոգեբանական , ֆիզիկական հատկություններից, մասնագիտական հմտությունների համակարգի լիարժեք ձևավորվածությունից է կախված ժամանակակից էլեկտրենային համակարգերով հագեցած սպառազինության և ռազմական տեխնիկայի յուրացման տեմպերը, մարտական պատրաստության բաղադրիչների ձևավորման անդյունավետությունը,մարտական խնդիրների կատարման և միջանձնային հարաբերություններում կանոնադրական նորմերի պահպանման նկատմամբ:

Հետազոտություններ են կատարվել Հայաստանում Վ.Բ. Յարամիշյանը, Գ. Աղազրյանը և այլ մասնագետներ իրենց գիտական աշխատություններում արտացոլում են զինվորական ծառայությանը նորակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարման դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները, ժամկետային

զինծառայողների քրեածին վարքի սոցիալ-հոգեբանական պատճառները և դրանց հաղթահարման ուղիները, սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության կատարելագործման ուղիներն ու միջոցները:

Հանրակրթական դպրոցներում կատարված հետազոտությունների արդյունքներից տարանջատվեցին զինվորական ծառայության նկատմամբ դրական և բացասական դիրքորոշում ունեցող նախազորակոչային տարիքի անձինք: Հետագա հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ , որ և դրական և բացասական դիրքորոշում ունեցող անձանց շրջանում առկա են բանակայի կենսակերպին հարմարված և չհարմարված զինծառայողներ: Այստեղից կարելի է եզրակացնել , որ զինվորական ծառայության նկատմամբ միայն դրական դիրքորոշման առկայությունը գրավական չէ , որ ապագա զորակոչիկը կհարմարվի զինվորական ծառայությանը:

Հետազոտական տվյալների արդյունքները ցույց են տալիս , որ զինվորական ծառայությունը նախազորակոչային տարիքի անձանց սոցիալ-հոգեբանական պատրաստման արդյունավետությունը պայմանավորված է անհատական – հոգեբանական առանձնահատկություններով, բնավորության անձնայի գծերով, հասունության ձևավորվածությամբ , սոցիալական ճկունությամբ:

Զինվորի մեջ հայրենիքի պաշտպանի ձևավորումը հնարավոր է ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցով, որի հիմքը դրվում է ընտանիքում , դպրոցում, հասարակությունում: Նշված բոլոր օղակները միմյանց փոխկապակցված են: Ընտանիքում դրվում է ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնաքարերը, դպրոցական ուսուցման ընթացքում դրանք զարգացվում են , որի ազդեցությունն ու արդյունքը կարելի է տեսնել հասարակության մեջ:

Ծառայությանը հարմարվելը հատուկ է աշխարհի բոլոր բանակներին: Նորակոչիկների համար միջավայրի կտուկ փոփոխությունը առաջ է բերում բացասական հույզեր՝ ներոզ, ընկճվածություն,տրամադրության անկում:

Առանձնացվում է ապահարմարվողական վարքի երկու տեսակ: Առաջինը բացասական ագրեսիվ տեսակն է, որին բնորոշ է մերժողական վերաբերմունքը շրջապատի, կարգ ու կանոնի, հրամանատարների նկատմամբ:

Նման զինծառայողները ունենու են բարձր ինոնագնահատական , համարձակություն, հավակնոտ են: Երկրորդ՝ տագնապային, դեպրեսիվ տեսակին բնորոշ է

պարփակվածությունը, ցածր տրամադրությունը , վճռականության բացակայությունը և ինքնամեղադրանք: Եթե հնարավոր չէ հստակորեն առանձնացնել հետազոտվողի տեսակը, ապա դա խոսում է խառը տիպի ապահարմարվողական վարքի մասին: Հանրակոթական ուսումնական հաստատություններում իրականացվող նախազորակոչային պատրաստությունը դրական ազդեցություն է ունենում, բաից միայն ֆիզիկական կողմի վրա, իսկ հոգեբանական տեսանկյունը մնում է բաց, պետք է ակտիվացնել սոցիալական ինստիտուտները, օրինակ՝ ընտանիքը ,ԶԼՄ ները:

Ծառայության ընթացքում ամենածանրը առաջին 40 օրն է՝ ադապտացիոն շրջանը, նաև վերջին 40 օրն է լարված՝ սպասման պատճառով:

Երկրորդ շրջանում խնդիրներ ծագում են միջանձնային փոխհարաբերություններում: Երրորդ շրջանում 15-րդ ամսից սկսած խնդիրներ գրեթե չեն լինում: Հոգեպես ոչ բարվոք վիճակում գտնվող նորակոչիկը կարող է ապակողմնորոշել մյուսներին քանի որ բանակը ենթադրում է խմբային աշխատանք: Հոգեպես ոչ բարվոք վիճակի պատչառը կարող է դառնալ միջավայրի կտրուկ փոփոխություն , ծնողների հոգածությունից զրկվելը: Հոգեբանի խնդիրը բացատրական աշխատանքի իրականացնելն է ,այդ ընթացքում փորձելով հասկանալ դիմացինի խառնվածքը:

Մեր կողմից իրականացվելիք հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել այն խնդիրները որոնք խոչընդոտում են բանակաբին կյանքին հարմարվելուն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պատրաստված և հոգեպես կայուն զինծառայող պետք է անարդարության խնդիրը հասցնել նվազագույնին:Ամուր բանակ ունենալու գրավականներից մեկը առողջ հոգեբանությամբ զինվերներ ունենալն է:

Շատ մեծ անելիք կա անելու նաև ընտանիքում ,ծնողները պետք է հասկանան որ եթե հուսադրում են որ իրենց երեխաները չեն ծառայելու նրանք հեշտությամբ չեն հարմարվելու ցառայությանը:Իցկ եթե կրում են անխուսափելիության գաղափարը դառնում են պատրաստված զինվորներ:

Նախ նրանց մեջ պետք է արթնացնել հայրենիքը ,իր ընտանիքը պաշտպանելու կարևորությունը,ապա նաև այն, որ ծառայությունը շատ կարևոր է հենց իր անձի համար:

Դժվարությունները հեշտ է հաղթահարել եթե գիտես ինչի համար ես հաղթահարում: Որքան ժամանակ է անհրաժեշտ որպեսզի զինվորը հարմարվի բանակային կյանքին՝ կարծում եմ 1-1,5 ամիս բավարար է: Նշված ժամանակահատվածում անձնակազմի հիմնական մասը կարողանում է հեշտ հարմարվել ,բայց անգամ ամենակատարյալ զորամասում կա մի հատված ,որն ունի դժվար հարմարվելու նախադրյալներ:Նրանք հիմնականում ընտանիքի վերջին կամ միակ զավակներն են և ունեն մոր հետ ուժեղ կապվածություն: Զինծառայությունն ինքնուրույն կյանք է և զորամասում սկսվում է նրա ինքնուրույն կրանքը:

Զինծառայողների հարմարվողականության գործընթացի արագացումը նրանց համար նոր կյանքի և գործունեության ,հոգեբանական և կարգավիճակային առանձնահատկությունները, ինչպես նաև գործընթացի օպտիմալ պայմանները չափազանց կարևոր խնդիրներ են:

Հետազոտության անցկացումը ուղղված է պատանի զինվորների սոցիալ-հոգեբանական հարմարվողականության մարտական պրակտիկայի մեջ հոգեբանական գործոնի առկայությամբ, ինչը թույլ է տալիս փաստացի մոտենալ զինվորական ծառայությանը պատրաստվող նորակոչիկների հարմարվողականության խնդիրների ուսումնասիրմանը: Զինվորական հոգեբանների ջանքերը ուղղված են պատանի զինվորների մոտ հոգեկան գործոնների հանդուրժողականության ձևավորմանը զինվո-

րական ծառայության ընթացթում,զինվերի անձի ինքնաբացահայտման պայմանների ստեղծմանը և հոգեբանական պատրաստվածության ձևավորմանը:

Հետազոտական աշխատանքի վերջնարդյունքում արվեցին հետևյալ հետևությունները՝ Հոգեբանի գործունեությունը հոգեբանական ուղեկցման մոդելի շրջանում թույլ է տալիս նախապատրաստել պատանի զինվորների արդյունավետ ուսուցմանը՝ նրանց կենսագործունեության ,սոցիալական նորմերի ,առանձին հոգեբանական և անձնական որակների զարգացման միջոցով:

Զինվորների կողմից հոգեբանական խնդիրների լուծումը ընձեռում է հնարավորություն սեփական անձի լիարժեք պահպանման ՝զոյատևման անսովոր պայմաններում Հարմարվողականության ժամանակ նկատելի դժվարություններ զգում են այն զինվորները ,որոնց կյանքի փորձում փոխգործակցության փոփոխություններ են եղել Նախազորակոչային տարիքում պատանիների մասնակցությամբ դաշտային պարապմունքների կազմակերպումը որոշակի ժամանակահատվածում ,կարող է նպաստել բանակում ավելի հեշտ հարմարվելուն: Հաճախակի այցերի կազմակերպումը զորամասեր հերոսների հետ շփումը կնպաստի բանակի մասին պատկերացումները մոտեցնել իրականին:

Այս բոլոր խնդիրների լուծումը կնպաստի զինվորական կոլեկտիվում հարմարվելու մակարդակի բարձրացմանը:

Մեր կողմից հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտելու այն խնդիրները որոնք հետագայում խոչընդոտ են բանակային կյանքին հարմարվելուն: Հետազոտական աշխատանքը իրականացվել է Շիրակի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում և Գյումրու զորամասերից մեկում: Աշխատանքների համար ներառվել են 10-12 դասարանի աշակերտները թվով 50 նորակոչիկներ և ժամկետային զինծառայողներ թվով 50 զինծառայող:

Ուսումնական հաստատությունների հետազոտական արդյունքներից պատզ է դառնում թե նորակոչիկների քանի տոկոսն է հարմարվել ,քանիսը դժվար կհարմարվեն և քանի տոկոսն էլ չեն հարմարվել բանակաբին կրանքին:Ըստ արդյունքների նախազորակոչիկների 30 տոկոսը կհարմարվեն բանակային կյանքին ,44 տոկոսը դժվարությամբ կհարմարվեն ,քանի որ զինվորական ծառայությունը համարում են ուղղակի պարտք, իսկ հետազոտվողների 26 տոկոսը բանակային կյանքին այդպես էլ չեն հարմարվում և ծառայությունը համարում են օրենքի պարտադրանք:

Զորամասում անցկացված հետազոտական աշխատանքի իրականացման արդյունքները հետևյալն են՝ զինծառայողների 34 տոկոսի համար հայրենիքի պաշտպանությունը կարևոր հիմք է ծառայելու համար և նրանք ավելի շուտ են հարմարվում ծառայությանը, սակայն ճնշող մեծամասնությունը 42 տոկոսը դժվար են հարմարվել բանակային կյանքին, 24 տոկոսը այդպես էլ չեն հարմարվել բանակային կյանքին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաբանսկի Յու., Մանկավարժություն.Եր., 1987:
2. «Զինապարտության մասին» ՀՀ օրենքը:
3. «ՀՀ զինված ուժերում հոգևու ժառայության կազմակերպման մասին կանոնադրություն»:
4. Հովհաննիսյան Գ.Մ., Ռազմահայրենասիրական դաստիարակության և հոգեբանական աշխատանքների բարելավման ուղիները դպրոցներում, Եր., 2012
5. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ,Եր.,1997
6. Պետրովսկի Ա., Ընդհանուր հոգեբանություն,Եր., 1974
7. Պողոսյան Վ., Հոգեբանությունը և կյանքը , Եր.2012
8. Ջամալյան Դ., Թադեվոսյան Հ., ռազմական հոգեբանությաբ խնդիրները , Եր. ,2002
9. Փալանդուզյան Հ., Ռազմահայրենասիրական դաստիարակությունը որպես զինվորական ծառայությանը սոցիալ- հոգեբանական պատրաստության միջոց Եր., 2005
10. Ջամալյան Դ.Վ., Թադևթսյան Հ,Վ., Ռազմական հոգեբանության խնդիրները, Եր., «Զանգակ-97», 2002:
11. Абрамова Г. С., Вазрастная психологиа ,М., Аспект-Пресс ,2005
12. Бодалев А.А., Психологиа личности, М., МГУ ,1988
13. Дьяченко М.И., Военная психологиа и педагогика , Минск ,1999
14. Коупленд Н., Психологиа и салдат , М., Военизда 1991
15. Ковалев А.Г., Психологиа личности, М., Просвешение ,1970